

Եւ որ ի կայս քան զամենայն :
Այսքան գրոց աստուածական,
Ջոր շարեցի անբանական,
Զձեզ աղաչեմ որք հանդիպիք,
Զմեղադրել իմ լրբութեան :
Զի ես տկար եւ սխալական,
Զեռնարկեցի յօժարական,
Գրեցի գկրկին սուրբ կտակարան,
Ոտամբ չափեալ սուտ Հովերական» :

Վերեւ տեսանք որ Մէլիք Աղայի եղբայրը Զալալ Բէկ, Նոր Զուղայի թիւ 477 ձեռագրի Յիշատակարանին մէջ, կը յիշէ .

«Այլ եւ եղբարք իւր նագելի,
Նախ սրբասէր Մէլիք աղին,
Որ ի հասակս երեք տասին,
Փոխի առ տէրն իւր ցանկալի» :

Բացատրութեան կը կարօտի հոս երրորդ տողը «որ ի հասակս երեք տասին» . թերեւս ըսել կ'ուզէ՝ թէ երեսնամեայ վախճանած ըլլայ Մէլիք Աղան, ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք՝ տապանագրին ընթերցումի հարցով զբաղելու առեն :

1667 Յուլիս 28 թուակիր շահեկան ընծայագիր մը, զոր Նոր Զուղայի դիւանէն առնելով՝ հոս պիտի ներկայացնեմ, ցոյց կու տայ որ Մէլիք Աղան իրապէս գրասէր անձնաւորութիւն մըն էր եւ ունէր ձեռագիրներ, որոնցմէ հինգը՝ իր ժառանգները կը նուիրեն, սոյն ընծայագրով, Նոր Զուղայի Ամենափրկչեան վանքին : Ահա՛ ընծայագիրը, որ կարեւոր վաւերացումներ մըն ալ է, միաժամանակ, Մէլիք Աղայի ճիւղագրութեան մասին .

«Պատճառ գրոյս այս է՝ որ մեք Սօջայ Մէ(լ)իք Աղէ որդի եւ թոռունք եւ հարսունք, մեր հայր եւ պապ եւ ըսկեսրօր Մէլիք աղէ յիշատակն հոգեւոր որ թողեր էր, այսինքն Աստուածաշունչն, եւ այլ չորս հատ գրեանքն, որ է մէկ հարցմունք, մէկ դատաստանագիրք, մէկ պատմագիրք եւ բողոքիք ի միասին, մէկ Միխայէլ, այս հինգ գրեանքն չորսն թողցիք, մէկ Աստուածաշունչն մագաղաթ եւ ոսկէ տուփ Իստամբուլու բանն : Այս հինգ գիրքս, որ մեր ծնողաց հոգեւոր յիշատակն է, մեք այլ մեր յօժարութեամբն եւ մեր կամօքն ընծեցինք Զուղայու Սբ. Ամենափրկչի վանացն, որ վախմ (վագֆ, կտակ) եւ յիշատակ լինի . որ միաբանքն սիրով կարդան վասն սիրոյն Քրիստոսի, մեր ծնողացն հոգեւոր ողորմեսցի ասեն, որ ցօղ ողորմութեան Քրիստոսի ցօղեսցէ ի շիրիմս ծնողացն մերոց, եւ որդոց եւ դստերացն իւրեանց, որ հանդուցեալ են առ Աստուած, այս-